Արձանագրություն N 20/18-4
«ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/18» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «12» հոկտեմբերի 2020թ.
ժ. 11:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ֆրեդիկ Բարսեղյանը,
Անդամներ՝ Լևոն Ավետիսյանը, Հենրի Դերձակյանը, Սարգիս Բեյբությանը և Քրիստինե Վարդանյանը.
Քարտուղար՝ Արմեն Պետրոսյանը:

I. Գնանշման հարցման ընթացակարգի բանակցությունների վերաբերյալ տեղեկատվություն

Ընդունել ի գիտություն, որ սույն թվականի հոկտեմբերի 7-ի ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/18 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշման համաձայն մրցույթի մասնակից «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-ն հրավիրվել էր առաջարկված գների նվազեցման բանակցություններին, համապատասխանաբար չափաբաժին 9-ի համար, որը տեղի էր ունենալու սույն թվականի հոկտեմբերի 12-ին ժամը 11:00-ին, ք.Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք հասցեում:

Սույն թվականի հոկտեմբերի 12-ի ժամը 11:00 դրությամբ ոչ մի մասնակից բանակցությունների չեր ներկայացել:

II. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

Հանձնաժողովը որոշեց.

ա) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետը չկայացած հայտարարել ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/18 ծածկագրով ընթացակարգի 9-րդ չափաբաժինը,

բ) ընտրված մասնակիցներ ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին նախապատվություն տալու սկզբունքով՝

- Չաբաբաժիններ 2-ի, 3-ի և 4-ի համար - «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ին,
- Չափաբաժիններ 5-ի և 6-ի համար - «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ին,
- Չափաբաժիններ 7-ի և 8-ի համար - Ա/Ձ Ալեքսան Ավետիսյանին,

գ) հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը,

դ) անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել ընտրված մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում.

Կողմ՝ 5, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ֆ. Բարսեղյան

գնահատող անդամներ՝ _____ Լ. Ավետիսյան

_____ Հ. Դերձակյան

_____ Ս. Բեյբության

_____ Ք. Վարդանյան

քարտուղար՝ _____ Ա. Պետրոսյան